

Անկախ աուդիտորի եզրակացություն

Ներկայացվում «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԿ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն ՀՄԷՄԿ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա: ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,


- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սամբուրյան, FCCA
Տնօրեն




Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

07 մարտի, 2022թ.

ք.Երևան

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2021 հազար դրամ	2020 հազար դրամ
Հասույթ	5	522,098	375,471
Այլ եկամուտ	6	-	100,064
		<u>522,098</u>	<u>475,535</u>
Պետությանը հանձնված գույքի ինքնարժեք	6	-	(96,249)
Ծրագրի սպասարկման ծախսեր		(229,432)	(181,631)
Աշխատավարձեր և հարակից հարկեր		(103,156)	(91,661)
Սերվերային համակարգի սպասարկման ծախսեր		(23,281)	(23,269)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսեր		(7,386)	(12,579)
Ամորտիզացիոն և մաշվածության ծախսեր		(14,748)	(10,640)
Տարածքի վարձակալության ծախսեր	7	(10,680)	(10,680)
Լաբորատոր թեստերի արդյունքների վերաբերյալ ծանուցումների առաքման ծառայություն		(5,869)	-
Հաշվապահական ծախսեր		(4,800)	(4,800)
Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր		(3,335)	(1,550)
Մարքեթինգի և հանրային կապերի ծախսեր		(654)	(1,227)
Կոմունալ ծախսեր		(4,700)	(4,600)
Հեռախոսային և ինտերնետ կապի ծախսեր		(3,790)	(3,956)
Ապահովագրական ծախսեր		(4,257)	(3,911)
Բանկային ծախսեր		(376)	(378)
Գործառնական այլ ծախսեր		(5,077)	(3,482)
		<u>(421,541)</u>	<u>(450,613)</u>
Գործառնական շահույթ		100,557	24,922
Ֆինանսական ծախսեր		(9,855)	(12,771)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից վնասներ		7,428	(12,148)
Շահույթ հարկումից առաջ		<u>98,130</u>	<u>3</u>
Շահութահարկի գծով ծախսեր	8	(16,350)	(2,096)
Զուտ շահույթ		<u>81,780</u>	<u>(2,093)</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. մարտի 7-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ավետ Սանուկյան

Տնօրեն



Թի Ըբաունթ ՍՈԸ-ի ներկայացուցիչ՝

Շուշաննա Մարգարյան

Գլխավոր հաշվապահ

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2021 հազար դրամ	2020 հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	57,086	42,842
Դրամական միջոցներ	10	172,912	88,210
		<u>229,998</u>	<u>131,052</u>
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	4,310	2,715
Ոչ նյութական ակտիվներ	12	134,514	147,150
Հետաձգված հարկային ակտիվներ	13	987	810
		<u>139,811</u>	<u>150,675</u>
ԸՆԴԱՍԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>369,809</u>	<u>281,727</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	14	100,929	127,555
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	65,100	32,172
		<u>166,029</u>	<u>159,727</u>
Ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընդամենը պարտավորություններ		<u>166,029</u>	<u>159,727</u>
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>203,780</u>	<u>122,000</u>
Կանոնադրական կապիտալ		50	50
Կուտակված շահույթ		203,722	121,942
Պահուստային կապիտալ		8	8
Ընդամենը սեփական կապիտալ		<u>203,780</u>	<u>122,000</u>

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2021 հազար դրամ	2020 հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների իրացումից մուտքեր	613,337	486,850
Այլ մուտքեր	5,865	3,075
	<u>619,202</u>	<u>489,925</u>
Ծառայությունների գծով վճարումներ	(298,138)	(334,378)
Վճարումներ աշխատավարձի գծով	(77,033)	(68,317)
Հարկային վճարներ	(122,902)	(118,663)
Այլ ելքեր	(4,233)	(2,909)
	<u>(502,306)</u>	<u>(524,267)</u>
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	116,896	(34,342)
<i>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(4,035)	(295)
	<u>(4,035)</u>	<u>(295)</u>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	(4,035)	(295)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</i>		
Ստացված փոխառությունների և դրանց գծով տոկոսների մարումից	(27,089)	(54,856)
	<u>(27,089)</u>	<u>(54,856)</u>
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	(27,089)	(54,856)
<i>Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	85,772	(89,493)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(1,070)	19
Դրամական միջոցներ տարեկզբի դրությամբ	88,210	177,684
<i>Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ</i>	<u>172,912</u>	<u>88,210</u>

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2020	50	8	121,942	122,000
Տարվա շահույթ	-	-	81,780	81,780
31 դեկտեմբերի 2021	<u>50</u>	<u>8</u>	<u>203,722</u>	<u>203,780</u>

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2019	50	8	124,035	124,093
Տարվա վնաս	-	-	(2,093)	(2,093)
31 դեկտեմբերի 2020	<u>50</u>	<u>8</u>	<u>121,942</u>	<u>122,000</u>